




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«13» 04 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 37

Ձեռնարկողը՝


<<Վազ Քար>> ՍՊԸ

ք. Վեդի, Արարատյան 8-րդ նրբ. բն 3

Գործունեությունը՝

Արարատի փրավերփինների և կավերի հանքավայրի
Գոռավանի տեղամասի արդյունահանման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
<< Արարատի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 37

« 13 » 04 2017թ.

ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Գոռավանի տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Վազ քար» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արարատի մարզ

Արարատի տրավերտինների հանքավայրի Գոռավանի տեղամասի շահագործման նախագիծը կազմված է «Վազ քար» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են 21.08.1981թ. ԽՍՀՄ ՊՊՀ-ի թիվ 8814 արձանագրությամբ, որպես հումք երեսապատման բլոկների և ցեմենտի արտադրության համար: Մեծադյուսների ելքը կազմում է 37%: Արտադրական թափոնները պիտանի են ցեմենտի արտադրության համար:

Արարատի տրավերտինների հանքավայրի Գոռավանի տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզում Արարատ քաղաքից 5կմ դեպի հյուսիս, իսկ Երևան քաղաքից 50կմ դեպի հարավ-արևելք: Վերջիններիս հետ հանքավայրը կապված է բարեկարգ ասֆալտապատ ճանապարհով: Սոտակա բնակավայրերն են Արարատ քաղաքը, Ավշար, Գոռավան գյուղերը և Վեդի ավանը:

Նախագծվող տարածքը նախկինում շահագործվել է, որի արդյունքում մակաբացման ապարները բացակայում են:

Բացահանքում նախատեսվում է բլոկների արդյունահանումը կատարել մեխանիզացված եղանակով, օգտագործելով CMP-028 քարիատ մեքենաներ:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը շահագործման առաջին տաս տարիների համար ընդունված է 10000մ³ թարմ տրավերտինների արդյունահանվող պաշար: Հաջորդ 11-30 և 31-50 տարիների տարեկան արտադրողականությունը՝ համապատասխանաբար 20000 և 50000մ³:

Նախագծվող բացահանքն ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝
- ամենամեծ լայնությունը՝
- ամենամեծ խորությունը՝
- - տրավերտինի հաշվեկշռային պաշարներ
- -թարմ տրավերտիններ՝ 1665000տմ
- - ճաքճքված՝ 65000տմ

550մ

150մ

41.6մ



Handwritten signatures and stamps at the bottom of the document.

- տրավերտինի կորզվող պաշարները`
- թարմ տրավերտիններ` 1500000խմ
- ճաքճքված` 65000խմ
- օտարման մակերեսը` 7.5 հա

Բացահանքի շահագործման ժամանակ նախագծային կորուստները որոշվում են ըստ 2 խմբերի:

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների կախված օգտակար հաստաշերտի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են` 100000 մ³ /թարմ տրավերտիններ/ կամ հաշվեկշռային պաշարների 6.25%:
2. Շահագործողական կորուստներ: Տվյալ դեպքում նրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից և ընդունվում են 1.0%:

Բացահանքը փաստացի բացված է և շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները:

- Մոտեցող գրունտային ճանապարհի կարգաբերում` 250մ³ ծավալով:
- Աշխատանքային հրապարակի կարգաբերում 902.56 և 903.6մ նիշ ունեցող հանքաստիճաններում` 12500մ³ ծավալով, այդ թվում 1200մ³ ճաքճքված և 500մ³ թարմ տրավերտիններ, որոնց ծավալներն ընդգրկվում են շահագործման 1-ին տարվա ծավալների մեջ:
- Արդյունաբերական հրապարակի կարգաբերում` 80մ³ ծավալով:

Մինչև 890.08մ նիշ ունեցող հորիզոնը բացահանքի հանքաստիճանների բացումը իրականացվում է նրա հարավային մասով արևմուտքից արևելք անցնող մուտքային ավտոճանապարհից սկիզբ առնող հորիզոնական և ըստ ռելիեֆի տեղադրվող խրամների միջոցով: 890.08մ նիշից ներքև մինչև հատակ հորիզոնների բացումը կատարվում է հանքակողով տեղադրված 1 թեք խրամի միջոցով թեքությունը ընդունվում է 70-100%: Խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 10.0մ:

Նախագծվող բացահանքի սահմաններում մակաբացման աշխատանքները ներկայացված են ճաքճքված տրավերտիններով, որոնց հեռացումը կատարվում է Ը3-171.1 մակնիշի բուլդոզեր-փխրեցուցիչ, Զ-6112 էքսկավատորի կամ ԿՊ-30 միաշերտի անիվային բարձիչ և ԿՊԱ3-256Ե մակնիշի ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Ը3-171.1 մակնիշի բուլդոզեր-փխրեցուցիչով մշակվելուց հետո, այն տեղափոխվում և կուտակվում է մինչև 10-15մ հեռավորության վրա, որից հետո Զ-6112 էքսկավատորի կամ ԿՊ-30 միաշերտի անիվային բարձիչով բարձրվում է ԿՊԱ3-256Ե մակնիշի ավտոինքնաթափի մեջ և տեղափոխում են 0.17կմ միջին հեռավորության վրա գտնվող ժամանակավոր արտաքին լցակույտ: Բացահանքի շահագործման 6-րդ տարուց ճաքճքված տրավերտինները և թափոնները տեղափոխվում են 6կմ հեռավորության վրա գտնվող Արարատի ցեմենտի գործարան:

Մեխանիզացված եղանակով բլոկների արդյունահանման համար օգտագործվում է СМР-028 մակնիշի քարհատ մեքենան:

Ընդունված է բարձրաստիճան միակողմանի ընդերկայնական ընթացքաշերտերով մակաբացման ապարների արտաքին լցակույտ տեղափոխելով:

Բացահանքում արդյունահանման ժամանակ ստացված բլոկների բարձունը տրանսպորտային միջոցների մեջ, ինչպես նաև բլոկների հեռացնելը հանքախորշից և դարսունը դարսակույտում կատարվում է ԿС-4561А մակնիշի ավտոմոբիլային կռունկի միջոցով:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները 24.2մ³ ընդհանուր ծավալով Ը3-171.1 մակնիշի բուլդոզերով տեղափոխվում են 10-15մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև, կուտակված թափոնները 1.1մ³ շերտի տարողությամբ ԿՊ-30 մակնիշի միաշերտի անիվային բարձիչով բարձրվում են ԿՊԱ3-256Ե



մակնիշի ավտոհնքնաթափի մեջ և տեղափոխվում մինչև 0.17կմ հեռավորության վրա գտնվող արտաքին լցակույտ:

Բլոկների տեղափոխումը մինչև 8կմ հեռավորության վրա Վեդի ավանում գտնվող մշակման արտադրամաս, ինչպես նաև ճաքճքված տրավերտինների և թափոնների տեղափոխումը մինչև 6.0կմ հեռավորության վրա գտնվող Արարատի ցեմենտի գործարան կատարվում է 12տ բեռնատարողությամբ KpA3 – 256Ե մակնիշի ավտոհնքնաթափի միջոցով:

Լցակույտ առաջացնող ապարները ներկայացված են ճաքճքված տրավերտիններից և արտադրական թափոններից: Բացահանքի շահագործման 5 տարիների ընթացքում լցակույտ առաջացնող ապարները 53150մ³ ընդհանուր քանակով /31500մ³ թափոններ և 21650մ³ ճաքճքված տրավերտիններ/ տեղափոխվում և ժամանակավոր պահեստավորվում են բացահանքային դաշտի տարածքի հյուսիսային մասում:

Լցակույտառաջացումը կատարվում է 3մ բարձրությամբ մեկ հարկով: Ապարների մնացորդային փխրեցման գործակիցը ընդունված է 1.2: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով: Ժամանակակից լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 2.1հա:

Բուլդոզերային աշխատանքներ դրանք մակաբացման ապարների մշակումը և կուտակումն է, միաքարի հեռացնելը հանքախորշից, արտադրական թափոնների տեղափոխումը և կուտակումը, ինչպես նաև լցակույտերում ապարների տեղափոխումը:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները, փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուրը բերվում է ԵԼԵԿ-1,4 մակնիշի կցովի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը KO-002 մակնիշի ջրցան-վազող ավտոմեքենայով:

Բացահանքում գետնաջրերը բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումների մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ճաքերի և ծակոտիների միջով և հեռանում է ինքնահոս կերպով:

Կենցաղային կեղտաջրերը ջրցուղարանից ինքնահոս կերպով թափվում են 25.0մ³ արտաքնոցի մեջ, որտեղից էլ աղբահան մեքենայով պարբերաբար հեռացվում են:

Բացահանքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը: Ընկերությանը իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: Տարեկան նախատեսվում է 225 հազ. դրամ գումար:

Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա
- Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,
- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:
- Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր



նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայողերի արտահոսք տեղի չունենա:

Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
3. Առաջացած շինադրի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վագ Բար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Գոռավանի տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ձ. Զուռնայան